ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018թ. նոյեմբերի 5-ից 9-ը Կանադա (Վանկուվեր)՝բնապահպանության նախարարի տեղակալ Այսեր Ղազարյանի գործուղման վերաբերյալ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

   ԱյսերՂազարյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

   Բնապահպանության նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**

   Կանադա (Վանկուվեր)

   2018թ. նոյեմբերի 5-ից 9-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպական տնտեսական հանձնաժողով (UNECE)

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

   ՄԱԿ-ի ԵՏՀ Հանձնաժողովի «Անտառների և անտառայինարդյունաբերության 76-րդ նստաշրջան»: Օրակարգի վերաբերյալ հղումը՝ https://www.unece.org/fileadmin/DAM/timber/meetings/2018/20181105/COFFI-2018-Draft-Programme.pdf :

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

Անտառների և անտառային արդյունաբերության 76-րդ նստաշրջանի ամենակարևոր թեման անտառային լանդշաֆտների վերականգնման, ինչպես նաև Կովկասում և Կենտրոնական Ասիայում Բոննի մարտահրավերների նախարարական կլոր սեղանի արդյունքների վերջնական քննարկում էր:

7. **ԵՐԿԿՈՂՄ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ**

Բարձրաստիճան հատվածում կազմակերպության ղեկավարության հետ քննարկվեցին Հայաստանի ստանձնած պարտավորությունները, մասնավորապես Բոննի մարտահրավերների շրջանակում 260000 հա անտառապատման աշխատանքների մասով: Մեր կողմից բարձրացվեց մշակված հաշվետվություններում տեղ գտած սխալների և անճշտությունների խնդիրը: Մասնավորապես նշվեց, որ անտառային ռեսուրսներիգլոբալ գնահատման 2010 և 2015 թվականների հաշվետվություններում Հայաստանի Հնարապետության անտառային տարածքների վերաբերյալ տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը, որի արդյունքում Բոննի մարտահրավերների նախարարական կլոր սեղանի արդյունքների վերաբերյալ ներկայացված հաշվետվություններում անտառածածկ տարածքների, հանքերի տարածքների փոփոխությունների դինամիկան սխալ է ներկայացված դրանից բխող բացասական հետևանքներով: Բացի այդ նշվեց, որ 260000 հա-ի անտառապատման պարտավորություն մինչև 2030 թվականը Հայաստանը չի ամրագրել, ավելին պոտենցիալ անտառապատման տարածքները պետք է վեր հանվեն IUCN-ի կողմից մշակված համապատասխան մեթոդաբանությամբ:

8. <u>ՁԵՌՔԲԵՐՎԱԾ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ</u>

Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության անտառային կոմիտեի քարտուղար պարոն Պետեր Չոկայի հետ քննարկվեցին վերոնշյալ խնդիրները և համաձայնեցվեց, որ իրենց պատասխանատուն պարոն Անսիի Պեկկարինենի հետ կփորձենք լուծումներ գտնել Հայաստանի Հանրապետության վերաբերյալ արդեն իսկ տրամադրված տեղեկատվության խնդիրների մասով:

Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպական տնտեսական հանձնաժողովի (UNECE) ներկայացուցիչ Թերեզա Լոեֆֆլեռի հետ համաձայնեցվեց, որ Կենտրոնական Ասիայում Բոննի մարտահրավերների նախարարական կլոր սեղանի արդյունքների վերաբերյալ հաշվետվությունների մասով ՀՀ

բնապահպանության նախարարությունը կներկայացնի մեկնաբանություններ՝ համապատասխան ուղղումներ իրականացնելու համար:

X

Բնապահպանության
նախարարի տեղակալ՝

Այսեր Ղազարյան